

Գ Ի Ր
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ
ԱՌ ՏԻԿԻՆ ՌՈԶ-ՎԱՐԴՈՒՀԻ ՄԷՄԻՇԵԱՆ

Ուրախությամբ կը տեղեկանանք թէ Մեծագոյն Պոսթոնի Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցոյ Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը որոշած են Կիրակի Յունիս 5-ին ընդունելութեամբ մը պատուել ձեզ՝ առ ի գնահատութիւն քանընդհանուր տարիներու ձեր անձնուէր ծառայութեան:

Ամբողջ քառորդ դար, որպէս քարտուղարուհի եւ վարչական օգնական, համերաշխաբար գործակցելով Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցոյ Հոգեւոր Հովիւներուն հետ, պարտաճանաչութեամբ եւ նուիրումով կատարած էք ձեզի վստահած պատասխանատու պաշտօնը: Ձեր ցուցաբերած պաշտօնի գիտակցութեան, ինչպէս նաեւ պարկեշտութեան ու հաւատարմութեան ոգին օրինակելի է:

Որպէս Առաջնորդ Հայաստանեայց Եկեղեցոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմին՝ կ'օրհնենք ձեզ եւ մեծապէս կը գնահատենք ձեր օգտակար ծառայութիւնները: Թող Տէրը Իր հովանին անպակաս ընէ ձեր եւ ձեր հարազատներուն վրայէն, եւ ձեզի պարգեւէ կատարեալ առողջութիւն:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

Մայիս 1994
Նիւ Եորք, Ն.Ե.